Նանե Սահակյան[1]

«ԳՆՈՒՄ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական գնումները պետության ամենակարևոր գործառույթներից են՝ հաշվի առնելով, որ պետական գնումների արդյունքում բավարարվում են պետության կարիքները, ինչպես նաև հաշվի առնելով, որ այս ոլորտում թույլ են տրվում մեծ քանակությամբ չարաշահումներ:

Պետական գնումների կամ պարզապես գնումների ոլորտի ուսումնասիրությունը սկսվում է գնում հասկացության բացահայտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ գործող օրենքի[2] 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գնումը պատվիրատուի հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների)՝ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է: Սույն օրենքի իմաստով՝

ա. ծառայության ձեռքբերում է նաև լիզինգը,

բ. գնում է նաև՝

- պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը,

- փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը,

- պետական և մասնավոր հատվածների գործընկերության, նեբառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքները:

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Տ. Բարսեղյան:

[2] Ընդունվել է 22.12.2010թ., ուժի մեջ է մտել 01.01.2011թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2010.12.29/69(803), հոդ. 1596:

Այսպիսով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում գնում հասկացությունը ներկայացվում է որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում:[1]

Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) կողմից մշակված «Պետական գնումների մասին» մոդելային օրենքի համաձայն ևս՝ «գնումները» կամ «հանրային գնումները» նշանակում են ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերում:[2]

Եթե անգլալեզու աղբյուրներում «procurement» եզրույթը միգուցե կարող է և իրավաբանական տեխնիկայի, իրավաբանական լեզվի տեսանկյունից խնդիր չառաջացնել, ապա նույնը չի կարելի ասել հայ իրավագիտության համար:

Այսպես, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գնումը ենթադրում է երեք տիպի նյութական և ոչ նյութական արժեքի ձեռբերում՝ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վերոնշյալ արժեքների ձեռքբերման համար հիմնականում հետևյալ պայմանագրերի կնքման հնարավորություն.

1. առուվաճառքի պայմանագիր՝ ապրանքների ձեռքբերման համար,

2. կապալի պայմանագիր՝ աշխատանքների կատարման համար,

3. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝ ծառայությունների մատուցման համար:

«Գնում», «գնել» եզրույթները հայ իրականության մեջ առավելապես ասոցացվում են առուվաճառքի կամ առուծախի պայմանագրի հետ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավոր-

---

[1] Այդպես է ներկայացված եղել նաև 05.06.2000 թ. և 06.12.2004 թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքներում:

[2] Տե՛ս https://www.uncitral.org/pdf/english/texts/procurem/ml-procurement-2011/2011-Model-Law-on-Public-Procurement-e.pdf:

վում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը):

Պայմանագրի տեսակի անվանումը՝ առուվաճառք, ինքնին բացահայտում է պայմանագրի երկու կարևոր տարրերը՝ «առնել (գնել) և վաճառել»:[1]

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Նույն օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Նպատակահարմար չհամարելով քննարկել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար կնքվող մյուս պայմանագրերի տեսակները և բավարարվելով վերոնշյալ հիմնական պայմանագրերի հասկացությունների վերհանմամբ՝ կարելի է փաստել, որ հայ իրավական մտքի համար խորթ է «աշխատանքի գնում» կամ «ծառայության գնում» արտահայտությունը: Աշխատանքի համար կիրառելի է պատվիրատուի առաջադրանքով կատարում, իսկ ծառայության համար՝ մատուցում արտահայտությունը:

Ռուսական գրականության մեջ ևս հանդիպում է այնպիսի մոտեցում, որ պետք է տարբերակել ապրանքների ձեռքբերումը աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից՝ համարելով, որ «գնումը» (закупка) նշանակում է ձեռքբերում և կարող է վերաբերել առուվաճառքի կամ ապրանքների մատակարարման

---

[1] «Առուվաճառք» կամ «առուծախ» անվանումը կիրառելու նախապատվության վերաբերյալ տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 2-րդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ՝ պրոֆ. Տ. Կ. Բարսեղյանի և պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008, էջ 9, թիվ 1 հղում:

պայմանագրերին, իսկ աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը վերաբերում է պետական պատվերին (государственный заказ): Նման կերպ փորձ է արվել տարբերակել պետական գնումը պետական պատվերից՝ հատկապես հաշվի առնելով, որ ՌԴ իրավական ակտերում կիրառվել և կիրառվում են երկու եզրույթներն էլ:[1]

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ գնում բառն իրականում կիրառելի է ապրանքների ձեռքբերման համար, իսկ աշխատանքների և ծառայությունների «գնում» չի կարող լինել. աշխատանքները և ծառայությունները պատվիրատուի առաջադրանքով համապատասխանաբար կատարվում և մատուցվում են:

Մասնագիտական գրականության, այդ թվում՝ գիտական հոդվածների և ատենախոսությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պետական գնումների վերաբերյալ միանշանակ հասկացություն գոյություն չունի: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետությունում այս իրավական ինստիտուտը կոչվել և կոչվում է (պետական) գնում, ապա օտարերկյա օրենսդրական ակտերում և գրականության մեջ միանշանակ չէ անգամ այս ինստիտուտին տրվող անվանումը: Ռուսական գրականության և իրավական ակտերի մեջ հաճախ կարելի է հանդիպել ինչպես «պետական պատվեր» (государсвенный заказ), այնպես էլ «պետական գնումներ» (государсвенные закупки) անվանումները: Անգլալեզու գրականության մեջ հանդիպում են ինչպես «հանրային գնումներ» (public purchasing կամ public procurement), այնպես էլ «կառավարական գնումներ» (government procurement) անվանումները:[2]

«Գնումների մասին» ՀՀ օրենքը գնումը ներկայացնում է որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում:

---

[1] Տե՛ս Бордунова С. А., Правовое регулирование государственных и муниципальных заказов по законадательству Российской Федерации», диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012, էջ 43:

[2] «Government procurement» եզրույթն օգտագործվում է մասնավորապես Առևտրի միջազգային կազմակերպության շրջանակներում 12.04.1979 թ. ստորագրված «Պետական գնումների մասին» համաձայնագրում (անգլերեն պաշտոնական տեքստը՝ https://www.wto.org/english/docs_e/legal_e/gpr-94_01_e.htm), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 15.09.2011 թ.:

Իրականում գտնում ենք, որ գնում հասկացությունը նման կերպ ներկայացնելը նեղացնում է գնման ինստիտուտին բնորոշ առանձնահատկությունները՝ սահմանափակելով այն որոշ նյութական և ոչ նյութական արժեքների ձեռքբերմամբ:

Գնման գործընթացն իրականում բավականին բարդ իրավաբանական փաստերի ամբողջություն է, այն ներառում է ինչպես ապրանքների՝ մասնավորապես գործողությունների ամբողջություն (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի, որոշ դեպքերում վարչաիրավական ակտերի ամբողջություն), այնպես էլ որոշ դեպքում իրավադարձությունների ամբողջություն, որոնք ազդում են գնումների գործընթացի ծագման և հետագա զարգացման համար (օրինակ՝ արտակարգ իրավիճակի առաջացում, որի հետևանքով առաջանում է արտահերթ և հրատապ պետական գնման անհրաժեշտություն):

Հաշվի առնելով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը «գնում» եզրույթը բացահայտելիս օգտագործում է «պատվիրատու» արտահայտությունը, նպատակահարմար ենք համարում անդրադառնալ նաև «պետական պատվեր» արտահայտությանը:

Ժամանակակից հայերենով «պատվեր» բառը բացատրվում է որպես որևէ բան պատրաստելու՝ արտադրելու՝ տրամադրելու հանձնարարություն:[1]

Ժամանակակից տնտեսագիտական բառարանում պետական պատվերը ներկայացվում է որպես պետական մարմինների կողմից տրվող և պետական բյուջեի միջոցների հաշվին վարձատրվող պատվեր՝ արտադրանքի ստեղծման, ապրանքների թողարկման, աշխատանքների կատարման համար, որոնցում հետաքրքրված է պետությունը: Նման պատվերը կարող է կատարվել ոչ միայն պետական, այլ նաև այլ ձեռնարկությունների կողմից: Պատվերը սովորաբար տրվում է մրցութային հիմքով:[2]

---

[1] Տե՛ս Էդուարդ Բագրատի Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 1196-1197: Էլեկտրոնային աղբյուր՝ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&pageNumber=1220:

[2] Տե՛ս Райзберг Б. А., Лозовский Л. Ш., Стародубцева Е. Б., "Современный экономический словарь, - 6-е изд., перераб. и доп, - М., ИНФРА-М, 2011: Է-

«Պետական պատվեր» արտահայտությանը, լինելով տնտեսագիտական կատեգորիա, ամրագրվելով օրենսդրության մեջ ձեռք է բերել նաև իրավաբանական հատկանիշներ: Պետական պատվերը ոչ միայն կիրառվում է պետության կողմից տնտեսությունը կարգավորելիս, այլ նաև այլ ոլորտներում՝ գիտություն, կրթություն և այլն:[1]

Այդուհանդերձ, «Գնումների մասին» ՀՀ օրենքը, օգտագործելով «պատվիրատու» արտահայտությունը, չի բացահայտել «պատվեր» եզրույթի իմաստը:

Հետաքրքիր է նաև այն, որ անգամ մինչև «Գնումների մասին» ՀՀ առաջին օրենքի ընդունումն իրավական ակտերում՝ մասնավորապես ՀՀ կառավարության որոշումներում, օգտագործվել է «պետական պատվեր» արտահայտությունը՝ այդուհանդերձ չբացահայտելով դրա էությունը:[2]

«Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը[3] ռազմական կարիքների համար պետական պատվերը սահմանել է որպես զինված ուժերը և այլ զորքերը ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների կողմից ներհանրապետական ռազմական ապրանքով և գույքով՝ սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով, ռազմատեխնիկական միջոցներով, ունեցվածքով և թիկունքային գույքով ապահովման գործառույթ:

Ռազմական կարիքների համար պետական պատվերը միայն պետական պատվերի մի տեսակ է, որն ունի խիստ առանձնահատկություն՝ կապված վերջինիս կիրառման ոլորտի հետ, ուստի՝ վերոնշյալ հասկացությունը չի կարող համարվել ունիվերսալ և կիրառվել մյուս պատվերների դեպքերի համար: Ավելին, սույն հասկա-

---

լեկտրոնային աղբյուր՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_67315/:

[1] Օրինակ «Կրթության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, որը սույն ուսումնասիրության շրջանակներից դուրս է:

[2] Տե՛ս օրինակ ՀՀ կառավարության 08.02.1995թ. թիվ 67 որոշումը ՀՀ 1995 թվականի պետական պատվերի մասին կամ 15.06.1996թ. թիվ 175 որոշումը ՀՀ 1996 թվականի պետական պատվերի մասին և այլն:

[3] Ընդունվել է 25.03.2015թ., ուժի մեջ է մտել 02.05.2015թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2015.04.22/23(1112) Հոդ.292, համար՝ ՀՕ-16-Ն:

ցությունը պետք է հիմնվեր հենց «Գնումների մասին» ՀՀ օրենքում տրվող հասկացության վրա՝ հաշվի առնելով, որ «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ պետական պատվիրատուն կազմակերպում և իրականացնում է ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրումը՝ Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով: Ինչպես արդեն նշվեց, նման հասկացություն «Գնումների մասին» ՀՀ գործող օրենքը չի պարունակում: Նման հասկացություն չի նախատեսվել նաև «Գնումների մասին» ՀՀ նախորդ օրենքներում:

Պետական (մունիցիպալ) պատվերի հասկացությունն օրենսդրական մակարդակով տրված է մի շարք պետությունների տարբեր իրավական ակտերում:

Այսպես, օրինակ 2000 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգրքի առաջնային խմբագրության 72-րդ հոդվածի 4-րդ կետով պետական կամ մունիցիպալ պատվերը սահմանվել է որպես կնքված պետական կամ մունիցիպալ պայմանագրերի ամբողջություն՝ ուղված ապրանքների ձեռքբերմանը, աշխատանքների կատարմանը, ծառայությունների մատուցմանը՝ համապատասխան բյուջեի միջոցների հաշվին: Նման ձևակերպումը քննադատության է արժանացել ռուս իրավագետների կողմից: Ե. Պ. Գուբինը, մասնավորապես, նշել է, որ վերոնշյալ պայմանագրերի ամբողջությունը մի կողմից պետական պատվերից բխող հարաբերությունների իրավական ձևն է, մյուս կողմից՝ պետության կողմից շուկայական տնտեսության կարգավորման միջոց:[1] Մեկ այլ հեղինակի՝ Տ. Վ. Ֆայբերգի պնդմամբ պետական պատվերը պայմանագրերի ամբողջություն ներկայացնելը նեղացնում է պատվեր հասկացության մեջ մտնող բյուջետային հարաբերությունների շրջանակը:[2]

Ռուսաստանի Դաշնության՝ 2006 թ. փետրվարի 2-ի թիվ 19-ՖՕ ֆեդերալ օրենքով 72-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ

---

[1] Տե՛ս Губин Е. П., Государственное регулирование рыночной экономики- и предпринимательства: правовые проблемы, М., Юристь, 2005, էջ 204-205:

[2] Տե՛ս Файберг Т. В., Государственный (муниципальный) заказ как форма организации бюджетного финансирования, Дисс.... к.э.н., Иркутск, 2006, էջ 40:

և չի պարունակել պետական (մունիցիպալ) պատվերի հասկացությունը:[1]

Պետական պատվերը՝ որպես պետական պայմանագիր կամ պայմանագրերի ամբողջություն ներկայացվում է նաև այլ պետությունների օրենսդրական ակտերում: Օրինակ՝ 1994 թ. «Պետական գնումների մասին» Շվեյցարիայի ֆեդերալ օրենքում (12.12.2000թ. դրությամբ) ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և շինարարական աշխատանքների պատվերները ներկայացվել է որպես պատվիրատուի և մրցույթի մասնակցի միջև պայմանագիր:[2]

«Մրցակցության սահմանափակման դեմ» 1998 թ. Գերմանիայի Դաշնության օրենքի համաձայն՝ պետական պատվերները պետական պատվիրատուի և ձեռնարկությունների միջև վճարովի պայմանագրեր են, որոնց առարկան են մատակարարումը, շինարարական աշխատանքները կամ ծառայությունները, ինչպես նաև մրցույթի գործընթացը, որի արդյունքում պետք է կնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր:[3]

Իրավագետները ևս միանշանակ տեսակետ չունեն պետական պատվերի հասկացության հարցում: Ռուս հայտնի իրավագետ Լ. Վ. Անդրեևան նշել է, որ տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ «պատվեր», «պետական պատվեր» հասկացություններն օգտագործվում են տարբեր իմաստներով՝ և' որպես պետական պայմանագիր, և' որպես ապրանքների մատակարարում, և' որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝ պետության կարիքների ամբողջություն: Լ. Վ. Անդրեևան պետական պատվեր եզրույթը սահմանել է իր աշխատության մեջ՝ այն ներկայացնելով որպես փաստաթուղթ, որը պարունակում է պետության՝ քանակով,

---

[1] Ռուսաստանի Դաշնությունում պետական (մունիցիպալ) պատվերի հասկացության օրենսդրական կարգավորման հարցերի հետ կապված մանրամասն տե՛ս օրինակ Кичик К. В., «Государственный (муниципальный) заказ как средство государсвенного регулирование экономики: правовые вопросы», диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 17-23:

[2] Տե՛ս Международный прокьюремент/ В. Малочко, Т. Уилсон и др. М. 2003, էջ 193:

[3] Տե՛ս նույն տեղում, էջեր 282, 295:

որակով, տեսականիով, ժամկետով և այլ բնութագրերով կոնկրետացված և սահմանված կարգով ձևավորված կարիք (անհրաժեշտություն) ապրանքներում, որոնց մատակարարումն իրականացվում է բյուջեի և այդ նպատակների համար ներգրավված ֆինանսավորման արտաբյուջետային միջոցների հաշվին, և որի տեղաբաշխումն իրականացվում է պատվերների տեղաբաշխման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:[1]

Պետական պատվեր հասկացությունը սահմանվել է նաև ռուս իրավագետների որոշ ատենախոսություններով: Մեր կարծիքով բավականին հաջողված և ընդգրկուն է հետևյալ հասկացությունը. «Պետական պատվերը հանրային-իրավական կառույցի (Ռուսաստանի Դաշնություն, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներ, մունիցիպալ կառույցներ)՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կոնկրետացված կարիքն է՝ ամրագրված իրավական ակտում (նորմատիվ-իրավական կամ վարչական), որը բավարարվում է օրենքով սահմանված կարգով պատվերների տեղաբաշխման միջոցով (որպես կանոն՝ անորոշ շրջանակի անձանց՝ պոտենցիալ մատակարարների շրջանում), պետական (մունիցիպալ) պայմանագրի, բյուջետային կառույցի քաղաքացիաիրավական պայմանագրի կամ այլ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքմամբ, որը պարունակում է այդ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին ներկայացվող անհրաժեշտ պահանջները, ինչպես նաև ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանները՝ պետական (մունիցիպալ) կարիքները բավարարելու նպատակով»:[2]

---

[1] Տե՛ս Андреева Л. В., Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд, правовое регулирование - 2-е изд., перераб. и доп, М., "Волтерс Клувер", 2011, պարագրաֆ 2.2, ինտերնետային աղբյուր՝ http://www.twirpx.com/file/533493/:

[2] Տե՛ս Кичик К. В., Государственный (муниципальный) заказ как средство государсвенного регулирование экономики: правовые вопросы, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 33:

Որոշ հեղինակներ պետական պատվերը դիտարկում են լայն իմաստով որպես պետական կարիքներ, իսկ նեղ իմաստով՝ որպես մրցույթի անցկացման մասին ծանուցում:[1]

Ատենախոսությամբ ներկայացված մեկ այլ հասկացություն է հետևյալը. «Պետական պատվերը հանրային կառույցի իշխանական կամահայտնության ակտ է՝ հասցեագրված պետական պատվիրատուին, որը նախատեսում է պետական կարիքների բավարարման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անհրաժեշտություն, որը տեղաբաշխվում է օրենսդրությանը համապատասխան՝ գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների միջև և հիմք է պետական պատվիրատուի և մատակարարի միջև պետական պայմանագիր կնքելու համար, և որը ֆինանսավորվում է բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին: Պետական պատվերը՝ որպես հանրային շահի ֆորմալիզացված արտահայտություն, անհրաժեշտ պայման է պետության կարիքների համար ապրանքների մատակարարման մասնավոր-իրավական հարաբերությունների իրացման համար»: [2]

Պետական պատվերը ներկայացվում է նաև որպես պետական պատվիրատուներին հասցեագրված գործադիր իշխանության կառավարչական ակտ, որը նախատեսում է որոշակի պետական կամ այլ պայմանագրի կնքման անհրաժեշտություն՝ ապրանքների աշխատանքների, ծառայությունների կարիքների բավարարման համար,[3] կամ որպես պետության անունից հանձնարարություն (կազ-

---

[1] Տե՛ս օրինակ Цикорев Н. Н., Колосов А. И., Государственные закупки: практика, организации и нормативное обеспечение: Учебное пособие. - Орел: Издательство ОРАГС, 2004, էջ 16, կամ Белов В. Е., Участие Российской Федерации и субъектов Российской Федерации в отношениях, связанных с государственными заказами: Автореф. дисс. ... к.ю.н. М., 2006, էջ 6, կամ Гуцелюк Е. Ф., Применение лотовой закупки при расходовании бюджетных средств //Госзаказ: управление, размещение, обеспечение, 2008, № 11, էջ 76 և այլն:

[2] Տե՛ս Блинов В. Г., Правовое регулирование частных и публичных отношений при поставке товаров для государственных нужд, на соискание ученой степени кандидата юридических наук, Чебоксары, 2009, էջ 55-56:

[3] Տե՛ս Тарабаев П. С., Гражданско-правовое регулирование поставки товаров для федеральный государственных нужд, автореф, Дисс., к.ю.н., Екатеринбург, 2009, էջ 12:

մակերպչական ակտ)՝ ապահովելու գյուղատնտեսական ապրանքների, հումքի և արտադրության մատակարարմամբ՝ համապատասխան հանրային-իրավական կառույցների շահերին համապատասխան:[1]

Ե. Պ. Գուբինի տեսակետը ճիշտ հակառակն է. ըստ նրա՝ պետական պատվերը վարչական (ադմինիստրատիվ)-պլանային ակտ չէ, որը պարտադիր կլիներ շուկայի մասնակիցների համար, այն պետական կարգավորման գործիք է, շուկայական պլանավորման գործընթացի բաղկացուցիչ մաս:[2]

Ի տարբերություն շուկայական տնտեսության՝ խորհրդային շրջանի պետական պատվերը կարելի է դիտարկել որպես կառավարչական ակտ, որը պարտադիր էր ոչ միայն պետական պատվիրատուի (համապատասխան պետական կառավարման մարմնի), այլ նաև մատակարարի (ձեռնարկության) համար: Պետական պատվերը սահմանափակված էր կատարող սուբյեկտներով և տեղաբաշխվում էր հաստատված պլաններին համապատասխան: Կողմերը որևէ բան չէին կարող համաձայնեցնել, իսկ պայմանագիր կնքելու կամքն արտահայտվում էր միայն փոխադարձ լռությամբ: Պայմանագիր կնքելուց խուսափելը դիտվում էր որպես վարչական իրավախախտում և պատժվում էր տուգանքով:[3] Ընդ որում, նաև նշվում է, որ միայն տեսական մակարդակով էր, որ պետական պատվերները կարող էին տեղաբաշխվել մրցութային կարգով:[4]

Ներկայումս՝ շուկայական տնտեսության պայմաններում, պետական գնումների մասնակցի համար պետական պատվերը չի կարող պարտադիր լինել, քանի դեռ վերջինիս հետ չեն ծագել պայմա-

---

[1] Տե՛ս Горбунова Л. В., Поставка; продовольствия; для государственных- нужд по российскому гражданскому праву, Дисс.— к.ю.н., Самара, 2003, էջ 23:

[2] Տե՛ս Губин Е. П., Государственное регулирование рыночной экономики- и предпринимательства: правовые проблемы, М., Юристь, 2005, էջ 207:

[3] Տե՛ս Брагинский М. И., Витрянский В. В., Договорное право, Книга первая, М., 2001, էջ 154:

[4] Տե՛ս Губин Е. П., Шерстобитов А. Е., Идея и реальность госзаказа // Политическое образование, 1989, № 7, с. 52; Медведев Д. А., Проблемы реализации гражданской правосубъектности государственного предприятия, Дисс. ... к.ю.н., Ленинград, 1990, էջ 134:

նագրային հարաբերություններ՝ դրանց չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից բխող բացասական հետևանքներով:

Ուստի, հաշվի առնելով պլանային տնտեսությունից անցումը շուկայական տնտեսության՝ կարելի է համարել, որ պետական պատվերը պետական կարգավորման ուղղակի (վարչական) մեթոդից վեր է ածվել անուղղակի (տնտեսական) մեթոդի:[1]

Ամփոփելով պետական պատվերի վերաբերյալ վերը նշված տեսակետները՝ հանգում ենք տարբեր հեղինակների կողմից ներկայացված հետևյալ հիմնական մոտեցումներին.

1. պետական պատվերը՝ որպես պայմանագիր կամ պայմանագրերի ամբողջություն,
2. պետական պատվերը՝ որպես փաստաթուղթ, որը պարունակում է պետության՝ որոշակի բնութագրերով կոնկրետացված և ձևավորված կարիք,
3. պետական պատվերը՝ որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կոնկրետացված կարիք՝ ամրդագրված համապատասխան փաստաթղթերով,
4. պետական պատվերը՝ որպես պետական կարիք,
5. պետական պատվերը՝ որպես մրցույթի մասին ծանուցում,
6. պետական պատվերը՝ որպես հանրային կառույցի իշխանական կամահայտնության ակտ (կառավարչական ակտ կամ կազմակերպչական ակտ), որը նախատեսում է պետական կարիքների բավարարման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անհրաժեշտություն:

Մեր կարծիքով պետական պատվերը՝ որպես պայմանագիր կամ պայմանագրերի ամբողջություն ներկայացնելու արդյունքում, խաթարվում է պետական պատվերի էությունը, քանի որ պայմանագիրը պետական պատվերի իրացման ձև է, միջոց՝ պետական պատվերի կատարման համար:

Մեր կարծիքով՝ պետական պատվերը պետական կարիքները հետ նույնացնելը ևս ճիշտ չէ: Ցանկացած պետական պատվերի հիմքում ընկած է որոշակի պետական կարիքի բավարարման անհրաժեշտություն, սակայն ցանկացած պետական կարիք չէ, որ վեր է ած-

---

[1] Տե՛ս Шевченко Л. И., Гредин Г. Н., Госзаказ в системе государственного регулирования экономики, Кемерово, 1999, էջ 45:

վում պետական պատվերի և բավարարվում պետական գնումների ընթացակարգի միջոցով: Այլ կերպ ասած՝ պետական կարիքն ավելի լայն է, և միայն համապատասխան ընթացակարգով ձևակերպվող պետական կարիքն է, որ կարող է վերածվել պետական պատվերի:

Պետական պատվերը միայն որպես ծանուցում դիտելը, գտնում ենք՝ ևս ճիշտ չէ: Իհարկե, պետական պատվերը նյութականանում է համապատասխան փաստաթղթերի միջոցով, սակայն սոսկ փաստաթղթի բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես պետական պատվերի բացակայություն:

Մյուս տարբերակներից մեզ համար առավել ընդունելի է այն տեսակետը, որ պետական պատվերը հանրային-իրավական կառույցի՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կոնկրետացված կարիքն է՝ ամրագրված իրավական ակտում, որը բավարարվում է օրենքով սահմանված կարգով գնումների ընթացակարգի միջոցով՝ համապատասխան պայմանագրի կնքմամբ, որը պարունակում է ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին ներկայացվող անհրաժեշտ պահանջները, ինչպես նաև ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանները՝ պետական (մունիցիպալ) կարիքները բավարարելու նպատակով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առաջին հայացքից միայն տեսական բնույթ կրող հասկացությունը, ինչպես երևում է վերը նշված տեսակետների և իրավական դրույթների վերլուծությունից, կարող է լուրջ խնդիրներ առաջացնել անգամ նաև գործնական տեսանկյունից: Հետևաբար՝ պատահական չէ, որ գնման ինստիտուտին վերաբերող գրեթե բոլոր աշխատանքներում (այդ թվում նաև՝ տնտեսագիտական աշխատանքներում) առանձնահատուկ կարևորվում է գնման ինստիտուտի առանցքը կազմող պետական պատվերի ուսումնասիրությունը:

Վերոգրյալի հիման վրա ամփոփելով գնման հասկացության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ գնումը կարելի է բնորոշել որպես պետական պատվերի վրա հիմնված իրավաբանական փաստերի ամբողջություն՝ ուղղված պատվիրատուի հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների) ձեռքբերմանը՝ ապրանքների գնմանը, աշխատանքների կատարմանը և ծառայությունների մատուցմանը:

Нанэ Саакян
Аспирант Кафедры гражданского права ЕГУ

ПОНЯТИЯ ЗАКУПОК И ГОСУДАРСТВЕННОГО ЗАКАЗА

Государственных закупки являются одни из самых ключевых функций государства, с помощью которого реализуются государственные нужды. Государственные закупки формируются с помощью государственных заказов. И так как на различных стадиях государственных закупок допускаются наибольшее количество злоупотреблений, исследование этой системы нужно начать от определения закупок и государственного заказа, что и пытались сделать в этой работе.

Nane Sahakyan
PHD Student of the YSU Chair of Civil Law of YSU

THE CONCEPTS OF PROCUREMENT AND STATE ORDER

Public procurements are one of the key functions of the state with which the state needs implemented. Government purchases are formed with the help of state (government) orders. And as in various stages of public procurement the greatest number of abuses are allowed, the study of this system should start from the definition of procurement and public order which we try to do in this work.

Բանալի բառեր՝ *գնում, պետական գնում, պետական պատվեր*
Ключевые слова: *закупки, государственные закупки, государственный заказ.*
Key words: *public procurements, government purchases, government (state) orders.*